

էր անցեալ տարուայ Դեկտ. անակնկալ
դէպքերի հետ:

Այդ ակամայ դարձեց յետոյ Կար.
սրբազանը չունեցաւ եռանդուն գոր-
ծունէութիւն, չնայելով գործեր աւելի
քան շատ էին: Նրան շուտով լքեցին
իր խորհրդակիցները և թեմ. ժողովի
անդամները:

Զուր նա «Թաւրիզի Յայտարա-
րութիւններով» ազդու կոչեր արեց
յիշեալ մարմիններին ի՞նչ ժողով հրաւի-
րելու, կամ պակասները լրացնելու հո-
մար միջոցներ ձեռք առնելու:

Իւր կոչերի արձագանքները չը-
գտնելով՝ նա երկուս յայտարարեց որ
կազմալուծուած է թեմական խորհուր-
դը և թեմական ժողովը, և ոչ ոք էլ
այդ չենքք:

Այնուհետև նա լուրի թողեց թաւ-
րիզը հրաժարման որոշումով անշուշտ,
սակայն մնալով իւր հայրենի գիւղում,
չգիտենք ինչու իրեն շարունակում էր
համարել առաջնորդ թեմի, ուր օտա-
րազաւանութիւնն էր ճարակում և
թեմը հովուողի էր կարօտում:

Կար. սրբազանը թեմից հեռանա-
լով թողնում էր 1500 թումանի մի
պարտք (որբի փող և այլն), որին հաւա-
սարապէս պատասխանատու պէտք է
համարել վերջին շրջանից ընտրուած թե-
մական խորհրդի բոլոր անդամներին:

Այդ տխուր հանգամանքներում
փոխանորդութիւնը վիճակուեց մէկին,
որ ոչ այդ պաշտօնին յատուկ տուեալ-
ներն ունէր, ոչ կարողութիւն և հեղի-
նակութիւն թեմի ներկայացուցչու-
թեան գործը վարելու:

Փոխանորդի գլուխ գործողը եղաւ
այն փառաւոր զեկոյցը, որ կաթողի-
կոսի և Կար. սրբազանի հակառակորդ-
ների ձեռքում լաւագոյն զէնքը դարձաւ
կործանելու իր բարերար Կարապետ
եպիսկոպոսին:

Այդ զեկուցման մէջ յայտնում
է, որ թեմն անտէր է, թեմ. ժողովը եւ
խորհուրդը կազմալուծ, գաւառներում
ժողովուրդը օտարազաւան և այլն:

Եւ կաթողիկոսական կոնգակի
իւրաքանչիւր տողը Կար. սրբազանի
երեսին էր խփում թեմի աւեր վիճա-
կը, ըստ գրութեան «փոխանորդին իւրոյ»

Էջմիածինը փութաց դարմանել
ցաւը՝ ուղարկելով հ. Մելիք Թանգեա-
նին, որ նախքան իւր գալը հեռագրել
էր-կատարել լրացուցիչ ընտրութիւն-
ներ հրաժարուածների տեղ:

Հասաւ ինքը Մելիք Թանգեան
վարդապետը և հազիւ 2-3 օր անց՝ մեր
«կազմալուծ» ժողովը «իրաւական
կազմով» եկաւ առաջնորդ ընտրեց
անտես անձանաչ վարդապետին:

Թէ ի՞նչ եղաւ այնուհետեւ, ինչ
ճնշուած գրութիւն ստեղծուեց ընտր-
եալի և ընտրողների համար այդ
արդէն յայտնի է. պէտք է յիշել միայն
այս, որ օտարազաւանութեան համար
գաւառները գնալու միասիւս ունեցող
Մ. Թանգեան հայր սուրբը Էջմիածնի
վրայ 300 ռուբլի ծախս նստելուց յե-
տոյ, նորէն դարձաւ Էջմիածին: Նշա-
նակում է զուր գալ և գնալ: Եւ այն
թեմական խորհուրդը, որ իբր կազ-
մուած էր նրա գալստեամբ, արդէն
լուծուեցաւ հէնց կազմուելուց յե-
տոյ:

Այն դէպքում, երբ հրաժարում
և հրաժարուել են թեմ. ժողով, թեմ.
խորհուրդը, պէտք էր իսկապէս փակել
առաջնորդարանը և ամսական 60-80
թուման անտեղի ծախս չպատճառել

թեմին:

Մեր փոխանորդը վաղուց պիտի
հասկացած լինէր, որ թեմ. խորհրդի
հեղած դէպքում իր պաշտօնավարու-
թիւնը անօգուտ է, ապօրէն և աւելորդ:
Պէտք չկայ դանազան թղթակցութիւն-
ներով Էջմիածնին իբր թէ իրերի դը-
րութիւնը ծանօթացնել և յայտնել որ
իր ուժից վեր է թեմի գործերին
հասնել:

Պէտք է դիմել ժողովրդին, յան-
ձնել նրան առաջնորդարանը, որ նա,
ժողովուրդը փութայ իր առաջնորդը
բերել ու թեմն ազատել այս անշուշ-
տութիւնից, մեռելութիւնից և անպէտ-
րութիւնից:

Գաւառներն անմիջապէս, անհովիւ,
անպարտք, առաջնորդարանը խաբարով
և պարտքի տակ, թեմը զուրկ իր ար-
ժանաւոր վարիչից-անա մեր գրութիւ-
նը այս թեմում: Միթէ Թաւրիզի ժո-
ղովուրդը ընդմիջտ անտարբեր կ'մնայ
և կ'տանի առաջնորդարանի այս ան-
կեալ վիճակը: Կամ պէտք է ժողովու-
ել և պահանջել մի առաջնորդ, կամ
պէտք է փակել առաջնորդարանը և
ստիպել Էջմիածնին պարտ ու պատ-
շաճ կարգադրութիւն անելու այս թե-
մի համար:

Իրերի այս սրտամորմոք դրու-
թեան մէջ լսում ենք որ Էջմիածինը
ամսական 100 ռուբլի նպաստ է նշա-
նակել Թաւրիզի առաջնորդին:
Նշանակում է Էջմիածնի առաջ
մեզ ներկայացրել են վատ, անպար-
տաճանաչ և չվճարող ժողովուրդ, որ
իբր մենք չենք ուզում մեր առաջ-
նորդն ու առաջնորդարանը պահել:
Որպիսի խայտառակութիւն մեր
թեմի համար:

Մինչդեռ սա այն թեմն է, որ
ամիսը 100 թուման ուճիկ է տուել
Կար. եպիսկոպոսին, 30-40 թուման
քարտուղարին, 20 թուման՝ տպարանի
տեսչին, ի բացակայութեան առաջնոր-
դի 20 թուման՝ փոխանորդ Կարապետ
քահանային, 13-15 թուման՝ գործավա-
րին, 6 թուման պարսիկ քարտուղա-
րին, 20 թուման՝ գիւտնական ծախսե-
րի, մի ծառայի՝ 6 թուման: Միջին
թուով մեր թեմը, նշանակում է, վը-
ճարել է ամսական 200 թումանից ա-
ւելի: Արդ, ինչու մեզ այնպէս ստո-
րացնել Էջմիածնի առջև, որ նա էլ
փութայ 100 ռուբլի մեզ նպաստ
տալ իբր աղքատների այն հիմամբ,
որ մեր առաջնորդարանը պարտքի
տակ է:

Հրաւիրում ենք մեր ժողովրդի
լուրջ ուշադրութիւնը մեզ խայտառա-
կող այս դէպքի վրայ, առաջադրում
ենք փակել առաջնորդարանը, տեսնել
ինչից են առաջացել պարտքերը, ինչ
գրութեան մէջ է տպարանը, և ինչ-
պէս առհասարակ կարգադրել առաջ-
նորդարանի ֆինանսները: Մինչև երբ
անառաջնորդ պիտի մնայ թեմը՝ նստ-
մանալով մեր և օտարների աչքում:

ՅՈՒՋՈՒՄՆԵՐ ԹԱԻՐԻՉՈՒՄ

Դեկտ. 20-ից Թաւրիզի թուրք
ժողովրդի որոշ դասերից բաւական
մարդիկ լցուել էին հեռագրատուն
բաստ և բողոքներ տեղում թէհրան:
Ամբողջ մի շաբաթ հեռագրատան մը
նալով ի դիմաց Թաւրիզի նոքա ստի-
պում էին կառավարութեան լսել ի-
րենց պահանջները:

Նորանց պահանջներն էին ա) հե-

ռացնել մայրաքաղաքից Սարգսր Ա-
սադին և բախտիարցիներին բ). չկան-
չել Թէհրան «բաղդադամ» (չարագու-
շակաքայլ) խնամակալ Նասր-օլ-Մուլ-
լին, գ) այդ պաշտօնին կոչել Սադ-էդ
Դովլին: Սատագոյն հեռագիր տրուած
էր մինիստրների ժողովին Էդրա-էլ-
Աւլիանի կողմից, Թէհրան արշաւե-
լու սպառնալիքով, եթէ այդ պահանջ-
ները չլուծէին և չյարգուէին: Թէհ-
րանը բաւական սպասեցնելուց յետոյ,
տուել է սառն պատասխան: Բաստ
նստողները այնուհետեւ անցել են մէ-
ջիգները: Լսուած էին և դժգոհութիւններ
Բէլժիկացոյց դէմ, որոնց յանձնուել է
հարկերի դանձումը սակայն ռուս հիւ-
պատասարանի նկատողութեամբ թուր-
քերը յետ են կանգնել վերջին պա-
հանջից: Ստաւով

ԹԱՎԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

2 Դեկտ. Սովուշուրկայ
Նախորդ ամսի (նոյ.) վերջերին
Բելժիկացի Դիւմէն (Dumez) օսման-
ցիների տեքստիլորներէից հեռանա-
լուց յետոյ 40-45 ձիւտուով, մեծ տո-
կոսը կառավարական գործեր, այստե-
ղից Սարգսր Գնաց՝ մաքսատուն վե-
րահաստատելու: Համանուն գիւղաքա-
ղաքի մօտերը Կեօվրիկ ցեղի Ստիր ա-
ղայի սրբու կողմից յախուռն յարձակ-
ման կենթարկուի, կապանուի ինքը
Դիւմէն, 4 ծառայող և երկու զինու-
որ, իսկ միւսները մթութիւնից օգ-
տուելով, թէ և ծմակներ մէջ կ'մագ-
նուին, սակայն այսօր կենդանի երե-
ւում են միայն 8 հոգի, որոնք նոյն
գիշերը փախուտու տալով ապաստան
են գտնում Մանգուր Բայիկ աղայի
գիւղը և յաջորդ օրը կառաջնորդութիւն
աստ անվնաս: Դեռևս չի իմացուել
թէ ինչ են եղել մնացորդները:

Սպանման վայրն է մեկնել դա-
տաւորը (Սարգսր մուքրի) մէկ երկու
թիւղանթով և 500-ից աւելի ձիւտու-
ներով մի մասը դեքօքցի քրդեր.
պատժելու յանցաւորներին:

Երէկ Թաւրիզի քարկուղարի օգ-
նական եկաւ աստ ի վերահասութիւն
և քննութիւն այս եղեռնական գործի:

Վից-կօնսուլ պ Եասս գալուց դէ-
սը վերացել են աւագակութիւններ,
կողովականներ և մարդասպանութիւն-
ներ, որ առաջ սովորական բաներ էին.
Ռուսաց պրեստիժը չափազանց բար-
ձրացել է:

Ինչպէս լսում ենք Սովուշուրկայ-
Միսնդարի ապահովութիւնը յանձնու-
ած է զէքօքցիի ցեղապետ Հաճի Էլ-
խանիին:

Քաղաքիս օսմ. հիւպատոսարանի
պահակներն էլ թուով 30 հոգի հեռա-
ցել գնացել են: Սալ.

ԳԵՂԱՐՈՒԾՍ

Նոյեմբերի 29-ին Լիւաւայի թա-
տերապրահում յօգուտ «Հայկազան-
թամբեան» դպրոցի և «Հայունեաց
Բար. Ընկ.» խաղացուեց Ն. Տիմկովս-
կու «Ուժեղներ և Թոյլեր» պիեսան 4
գործողութեամբ:

Այդ պիեսը սորանով երրորդ ան-
գամն է, որ խաղացում է Թաւրի-
զում, թէ և այս անգամ անհամեմատ
աւելի թոյլ:

Բանը նրանումն է, որ մեր սի-
րողների խմբերը կազմուած են լինում,

մեծ մասամբ, ոչ թէ պահանջուած
ընդունակութիւնն ու շնորհքն ունեցող
անհատներից, այլ այնպիսի մարդկան-
ցից, որոնք միայն հանգամանքների
բերմամբ՝ կարծես ակամայ պարտա-
կանութիւն ունի բեմ բարձրանալու,
ինչպէս են հայ դպրոցի ուսուցիչ-ուսի
ները և այս կամ այն բարեգործական
ընկերութեան անդամ-ուսիները:

Այս ընդհանուր երևոյթն աչքի
առաջ ունենալով պէտք չէ, հարկաւ,
շատ խտապահանջ լինել նման անհա-
տներից, բաղկացած պիւրիզների խմբի
վերաբերմամբ: Քաւական է, եթէ
նոքա իրենց դերը լաւ գիտենան և
յոյսները յուշարարի վրայ չդնեն, ըմ-
բոնեն փոքր իշատէ իրենց դերը և
արտայայտեն, եթէ ոչ շնորհալի, գոնէ
և ոչ անբնական կերպով:

Յիշեալ պիեսի մէջ իրենց մտած-
ւած խաղով աչքի էին ընկնում պ. Գ.
Ա. Գիւրգիւնի (Գեորգի դերում) և պ.
Մել. Արքանամեան (Իմիտորի): Եր-
կուն էլ հին սիրողներ, երկուն էլ
աշխատում էին իրենց խաղին գեղար-
ւեստական գոյն տալ, այդ պատճա-
ռով էլ յաճախ դիմում էին չափազան-
ցութիւնների, որի ազդեցութիւնը ա-
ռաւելապէս անդադարւում էր առաջ-
նի խաղի վրայ: Պ. Մել. Արքանամեա-
նը աչքի էր ընկնում նաև իւր տիպիկ
գրիմով, որ քիչ չէր նպաստում նորա
խաղի թողած տպաւորութեան:

Իրենց բնական ու պարզ խաղով
աչքի էին ընկնում տ. Հ. Ատովմեան
(Եւգենիա) տ. Լիզա (Ալուիսա Սիմէօ-
նովնա) և տ. Հ. Մել. Բաղդասարեան
(Վառվառա Իվանովնա) վերջինս աւե-
լի յաջող էր Ա. արարուածում: Տիկ.
Ատովմեանը բեմի վրայ պահում էր
իրեն ազատ կեօսում գուարթ ուկրա-
նուկ շեշտով, ինչպէս վայել է ուժեղ-
ներին: Անհասկանալի էր միայն ին-
չու տիկինը «ազգակցական կապը»
արտայայտութիւնը շուտ էր տալիս
«ազգասիրական կապի» և այն երկու
անգամ իրար ետեից:

Ուժեղ տիպերից գլխաւորը Իի-
միտորի Պրիդուրովը (պ. Գ. Յակով-
բեան) բեմի վրայ շատ աւելի թոյլ
գուրս եկաւ, քան կարելի էր ենթա-
դրել: Փոխանակ ուժեղութեան՝ նա
այնքան թոյլ էր, որ մինչև իսկ չէր
կարողանում զսպել իւր վարակիչ ծի-
ծաղը Տամբուրինովի դէմքին նայելու:
Դա մի փորձութիւն է, որ պատահում
է աւելի սկսնակ ութթեմաիտ սիրող-
ներին. իսկ մի լուրջ սիրող պէտք է
կարողանայ չենթարկուել նման փոր-
ձութեան:

Մնացած դերակատարները լրաց-
նում էին անսամբը, ունենալով ումանք
աչքի ընկնող պակասութիւններ խօսե-
լու և թէ ման գալու մէջ:

Հասարակութիւնը քիչ էր, մանա-
ւանդ առաջին կարգում: R.

ԼՈՒՐԵՐ

Կերակի Դեկտ. 23-ին պատարագին
կարգացուեց վեհի կոնգակը և եղաւ քարոզ.
պէտք է խուսափել նման քարոզներից
գոնէ Ղալայում:

Ս. Աճաճին եկեղեցոյ երեսփոխ պ. Ա.
Բարխուդարեանը խնդրում է մեզ շնորհա-
կալութիւն յայտնել Վարդանեան եղբայր-
ներին իրենց նուիրած մի շան համար և
պ. Միսակ Բժշկեանին՝ մի վարագոյրի
համար:

Միտքի 1813 թուի № 1-ը լոյս կտես-
նէ յունուար 19-ին Տարէն կտանք 48 համար:
Դեկտ. 10-ին կաթողիկոսի եկեղե-
ցում մատուցուեց պատարագ Սարգսրու
սպանութեան և մաքսատան պաշտօնեայ Դիւ-
մէնի յիշատակին: Հրաւիրուած և ներկայ
էին պետական, դպրոցական և այլ հաստա-
տութեանց պաշտօնեաները, բոլոր հիւպա-
տոսները և շատ բարձրաստիճան մարդիկ:

Ուրազիր-հրատարակիչ

Ա. Տ. Վարդանեան

1) Մակուի խան: